Ամփոփ նյութ

Ա/Ձ «ԳԱԳԻԿ ԴՀԵՐՅԱՆ» (ԼԻՑԵՆԶԻԱ ԹԻՎ 377) ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՅԼ ՏՐՎԱԾ ԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ **Ա/Ձ «ԳԱԳԻԿ ԴՀԵՐՅԱՆ» (ԼԻՑԵՆԶԻԱ ԹԻՎ 377)** փոխանակման կետի նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց՝ արժութային գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտման համար:
Ստորև ներկայացված է որոշման վերնագիրը և եզրափակիչ մասը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ
ՈՐՈՇՈՒՄ
07.04.2021Թ. ԹԻՎ 1/190Ա
Ա/Ձ «ԳԱԳԻԿ ԴՀԵՐՅԱՆ» (ԼԻՑԵՆԶԻԱ ԹԻՎ 377) ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՒՅԼ ՏՐՎԱԾ ԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սույն որոշման նկարագրական մասի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերում նկարագրված խախտումները թույլ տալու համար Փոխանակման կետի նկատմամբ կիրառել **թիվ 377 լիցենզիայի գործողության կասեցում՝ վեց ամիս ժամկետով:**
2. Սույն որոշման նկարագրական մասի 2-րդ կետում նկարագրված խախտումը թույլ տալու համար Փոխանակման կետի նկատմամբ կիրառել **նախազգուշացում**:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փոխանակման կետ մուտքագրվելու կամ Փոխանակման կետի՝ սահմանված կարգով լիազորված անձին հանձնվելու օրվան հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ուժի մեջ մտնելու պահից երկու ամսվա ընթացքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ